

Դավիթ Ռ. Մոսինյան
Փիլ. գիյ. թեկնածու

ՀԱՅԴԵՆ ՈՒԱՅԹԻ ՄԵՏԱՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ

Լեզվաբանական շրջադարձի համատեքստում*

Բանալի բառեր–պատմություն, պատմագրություն, լեզվաբանական շրջադարձ, նարատիվ, անալիտիկ պատմության փիլիսոփայություն, Ուայթ, մետապատմություն, տրոպ:

Մուտք

Ա. Շոպենհաուերն ասում է, որ ամբողջ աշխարհի գոյությունը կախված է առաջին բացված աչքից, եթե նույնիսկ այն պատկանում է միջատի¹: Համանմանորեն՝ **պատմության գոյությունը կախված է այն ամրագրող գիտակցությունից**:

Չկա պատմության գոյությունը փաստողը՝ չկա նաև պատմությունն ինքը: Այդ իմաստով է երբեմն խոսվում այն մասին, որ պատմություն չկար, ասենք՝ Հին Հունաստանում, քանզի դեռևս չկար պատմության՝ որպես առանձին գոյացության կամ էացության գիտակցում: Սակայն, մյուս կողմից, աչքը, բնականաբար, ի գորու չէ նկատել, ըմբռնել աշխարհը իբրև մեկ ամբողջություն: Ի հավելումն՝ թվում է, թե երկու սերունդը պիտի բավական լիներ պատմությունը մտածելու համար, մինչդեռ պատմությունը, ինչպես և աշխարհը, տրված չեն փորձում, ուստի մտածողությանը ինքնագիտակցական անդրադարձի ժամանակ է հարկավոր՝ հասու լինելու մտային-տեսական օբյեկտներին:

Առավել մեծ են մտածողության ջանքերը՝ հասկանալու համար, թե ինչու է անհրաժեշտ պատմության ուսումնասիրումը: Դա է վկայում այն փաստը, որ մինչև տասնիններորդ դարը աշխարհի համալսարաններում գրեթե չէր դասավանդվում պատմություն, առավել ևս՝ չկային պատմության ֆակուլտետներ: Համարվում էր, որ պատմություն գրելն առանձնակի հմտություններ չի պահանջում, և դա կարող են անել բոլորը: Առաջին անգամ Հեգելը, Ռան-

Ը (ԺԳ) փարի, թիվ 1 (53) հունվար-մարտ, 2016
ՎԷՎ համահայկական հանդես

*Հոդվածն ընդունվել է տպագրության 12.03.2016:

1 Տե՛ս **Schopenhauer A.**, Die Welt als Wille und Vorstellung, Erster Band. Leipzig, 1859, էջ 35-36:

կեն և գերմանացի ժոմանտիկներն են (մասնավորապես՝ Ֆրիդրիխ Շլեգելը) հատուկ ուշադրություն դարձրել պատմությանը՝ դրանով իսկ արդիակա- նացնելով պատմական գիտելիքի ձևավորման անհրաժեշտությունը: Իսկ Քոլինգվուդն արդեն բաց տեքստով փորձել է պատասխանել այն հարցին, թե ինչու ենք ուսումնասիրում պատմությունը²:

Պատմության ուսումնասիրման և ներկայի ու ապագայի հետ դրա կա- պի գիտակցմանը զուգընթաց առաջ է գալիս դրա «ինչպե՞ս ուսումնասի- րելու» հարցը: Հնարավոր է պատմական փորձառություն կամ զգացողու- թյուն, թե՛ պատմությունը միայն «գրքերում» է: Եթե հնարավոր է զգալ պատմությունը, ինչպե՞ս է հնարավոր փոխանցել այն ուրիշին: Եթե պատ- մությունը ամրագրված է տեքստերում, ինչպե՞ս պարզել դրա վերաբերե- լիությունը, այսինքն՝ համապատասխանում է դրանց ինչ-որ եղելություն, թե՛ ոչ: Թեև ոչ բոլոր պատմաբաններն են մտքում ունեցել այս հարցերը, այնուամենայնիվ, սրանք պակաս կարևոր չեն պատմական գիտակցությու- նը կրողների համար:

1. Պոզիտիվիստական կամ իրադարձային պատմագիտության ձգնաժամը

Պատմության կարևորության գիտակցումից հետո պատմագիտության մեջ գլխավորապես արմատանում է Կոնտից սերող պոզիտիվիստական մոդելը՝ համեմված Հումբոլդտ-ճանկեական կարգախոսով՝ ներկայացնել անցյալն այնպես, ինչպես «եղել է իրականում»: Ի դեպ, այս մոդելը հետա- գայում իր արտաքուստ՝ մարքսյան, իսկ իրականում՝ բնագիտության նվա- ճումների մեխանիկական ընկալումից բխող գոտեհիկ-սոցիոլոգիական բո- վանդակությամբ որդեգրվեց ու արմատացավ խորհրդային պատմագրու- թյան մեջ:

Պատմագիտության պոզիտիվիստական մոդելը ենթադրում է մի քանի հիմնարար դրույթներ, մասնավորապես՝ որ պատմությունը գիտություն է անցյալի մասին, և պատմագիտական ուսումնասիրությունների առարկան գրավոր աղբյուրներում ամրագրված անցյալն է, իսկ հետազոտության նպատակը, այսպես ասած, «մեծ» իրադարձությունները վերհանելն է, որոնք հիմնականում քաղաքական և ռազմական բնույթի են: Պոզիտիվիստ պատ- մաբանն իր հերթին ձգտում է **անաչառության** և **օբյեկտիվության**: Ընդ որում, ըստ նրանց դա հնարավոր է, քանի որ պատմությունն ընթանում է միագիծ ժամանակի մեջ, և հետազոտողը հնարավորություն ունի «կողքից նայելու» և հստակորեն որոշարկելու իր տեղն ու ուսումնասիրվող օբյեկտի տեղը: Եվ վերջապես՝ պոզիտիվիստները համարում էին, որ պատմությունը՝ իբրև գիտություն, պետք է որդեգրի բնագիտության մեթոդները, այսինքն՝ կառուցարկվի բնագիտության մոդելով³:

Սակայն այդ դրույթների խնդրահարույց լինելը (ինչը նկատելի դար- ձավ ժամանակի ընթացքում) հիմք տվեց վիճարկելու դրանք և լայն հորի-

2 Տե՛ս **Collingwood R. G.**, *The Idea of History*. Oxford University Press, 1994, էջ 10:

3 Տե՛ս **Рохас К. А.**, *Критический подход к истории французских «Анналов»*. М., «Кругъ», 2006, էջ 81-82:

զոններ բացեց պոզիտիվիզմը հաղթահարելու համար: Նախ, գիտության փիլիսոփայության մեջ հատկապես հետպոզիտիվիստների ջանքերով ցույց տրվեց, որ բնագիտական տեսությունները, մեղմ ասած, այնքան էլ ապացուցված և վերջնական չեն, որ գիտական վարկածները սկզբունքորեն ֆալսիֆիկացվում են, և հետևաբար՝ դրանց կառուցման մեթոդների ֆետիշացումը ոչ այլ ինչ է, եթե ոչ խոնարհում առ ոչինչ: Մյուս կողմից՝ հիմնովին քննադատվեց պոզիտիվիստների համար երանելի **դիտարկման լեզվի** հնարավորությունը, և որպես մեկնակետ ընդունվեց **«փաստերն ունեն տեսական ծանրաբեռնվածություն»** դրույթը: Ասել է թե՛ **գոյություն չունեն ատոմար փաստեր**, դրանք այս կամ այն տեսության դիրքերից են համարվում այդպիսին, և հետևաբար՝ **չկան եզակի իրադարձություններ**:

Քննադատության մյուս հատույթը հերմենևտիկականն է: Դեռևս Շլայերմախերի հերմենևտիկական ուսմունքում ձևավորված, իսկ հետագայում գիտական հանրության մեջ արմատացած **հերմենևտիկական շրջանի** դիրքերից (համաձայն որի՝ **մասը ձանաչվում է ամբողջի միջոցով, իսկ ամբողջը՝ մասի**) հնարավոր չէ ուսումնասիրել և հասկանալ առանձին իրադարձությունը⁴: Այսինքն՝ պոզիտիվիստների «պաշտելի» իրադարձությունը՝ որպես փաստ և ամբողջի մաս, իմաստագուրկ է և անստածելի: Այս տեսանկյունից, փաստորեն, պոզիտիվիստական ռեդուկցիոնիզմը թույլ չի տալիս «բռնելի դարձնել» համաշխարհային պատմությունը, որովհետև վերջինս ոչ թե առանձին իրադարձությունների ամբողջություն է, այլ, նախևառաջ, իդեալական օբյեկտ, որի ռելևանտությունը, ձիշտ է, առնվազն վիճարկելի է, քանի որ մատնանշելի չէ դրա կրողը կամ սուբյեկտը⁵, բայց այստեղ մեզ հետաքրքրողը «համաշխարհային պատմություն» ասվածի **աշխարհի քաղաքակրթական պատկեր** իմաստն է:

Գլոբալացող աշխարհում սեփական պատմությանը հաղորդակցվելը ձեռք է բերում նաև քաղաքակրթական չափման մեջ տեղակայվելու և կոորդինացվելու իմաստ: Եվ այս առումով հարցը առավել քան հրատապ է Հայոց պատմության պարագայում: Հայկական առանձին քաղաքակրթության լինել-չլինելու խնդիրը շատ «ջուր կքաշի», այդ պատճառով այստեղ զերծ մնանք այդ հարցի քննարկումից: Բայց և այնպես, հարկ է նշել, որ Հայոց պատմությունն առավել ամբողջական ու հասկանալի կդառնա միայն լայն քաղաքակրթական ուրվագծերի մեջ: Պետության տևական բացակայությունը, օտարների լծի տակ լինելը, մշակութապես ուրիշներից ազդված լինելը Հայոց պատմությունը դարձնում են, այսպես ասած, հատվածական, իսկ իրադարձությունների պատմության մեթոդաբանությամբ մասերի ի մի բերումը՝ «հավաքագրումը», դատապարտված է անհաջողության:

Միով բանիվ՝ պոզիտիվիստական պատմագիտության հաղթահարման անհրաժեշտությունը (ինչը տեղի ունեցավ հիմնական երեք տարբեր ուղղություններով, այն է՝ Աննալների դպրոցը, հերմենևտիկական-ֆենոմենոլոգիական ուղղությունը և անալիտիկ պատմության փիլիսոփայությունը), չափազանց հրատապ դարձրեց պատմագրության ինչպես-ի խնդիրը. ինչպե՞ս է գրված և ինչպե՞ս գրել պատմությունը: **Սույն հոդվածում խոսվելու**

4 Տե՛ս **Schleiermacher F.**, Hermeneutics and Criticism and Other Writings. Cambridge University Press, էջ 24:
5 Տե՛ս **Spengler O.**, Der Untergang des Abendlandes. Erster Band. München, 1920, էջ 15 20-36:

Է միայն անալիտիկ պատմության փիլիսոփայության մեջ տեղի ունեցած «անցուդարձերի» մասին:

2. Լեզվաբանական շրջադարձից՝ նարատիվիստական շրջադարձ

Քսաներորդ դարում փիլիսոփայության շրջանակներում տեղի է ունենում **լեզվաբանական շրջադարձ**, ինչը կոչված էր լուծելու փիլիսոփայության մեջ առկա խառնաշփոթ (գուցե թվացյալ) վիճակը: Լեզվաբանական շրջադարձն ունենում է երկու ալիք. առաջինը՝ դարասկզբին, մասնավորապես՝ Վիտգենշտայնի, Հայդեգերի աշխատություններում, երկրորդը՝ 1960-ական թվականներին՝ ստրուկտուրալիզմի շրջանակներում: Հենց վերջին շրջանում է լեզվաբանական շրջադարձը փոխադրվում նաև պատմության ոլորտ: Լեզվաբանական շրջադարձը նշանակում է, որ փիլիսոփայության ուսումնասիրության առարկան, վերջին հաշվով, միայն լեզուն է: Այդ խնդրին անդրադառնալիս Վիտգենշտայնը գրում է. «Նախադասությունների և հարցերի մեծամասնությունը, որոնք արտահայտվում են փիլիսոփայական խնդիրների առնչությամբ, ոչ թե սխալ են, այլ անիմաստ: Ուստի մենք ընդհանրապես չենք կարող պատասխանել այդօրինակ հարցերին, մենք կարող ենք լոկ հաստատել դրանց անիմաստությունը: Փիլիսոփաների հարցերի և նախադասությունների մեծ մասը բխում է այն բանից, որ մենք չենք հասկանում մեր լեզվի տրամաբանությունը»⁶, քանի որ, բնականաբար, մեր մտքերն արտահայտվում են լեզվի միջոցով, ծնվում են լեզվական թաղանթում: Ավելին՝ լեզուն ոչ միայն արտահայտում է մտքերը, նկարագրում է աշխարհը, այլև այդ աշխարհը, նախևառաջ, տրված է լեզվում. ոչ թե աշխարհն ինքնին բաժանված է, և մենք նկարագրում ենք այն, այլ ամեն լեզու ինքն է բաժանում աշխարհը: Վերջինս, օրինակ, կարելի է ներկայացնել առարկաների, հատկությունների կամ հարաբերությունների համակարգի տեսքով, բայց այդ ընտրությունը կատարվում է լեզվում: Առհասարակ լեզվից դուրս ոչ լեզվական ոլորտի գոյությունն արդեն իսկ խնդրահարույց է, որովհետև հենց խոսում ենք դրա մասին, այն վերածվում է լեզվական ոլորտի: «**Իմ լեզվի սահմանները** նշանակում են իմ աշխարհի սահմանները»⁷, - գրում է Վիտգենշտայնը: Լեզվից անդին հնարավոր չէ մտածել ոչինչ, ուստի ամեն անգամ խոսելիս մենք, նախևառաջ, խոսում ենք լեզվի մասին, և փորձել խոսել ոչ լեզվականի մասին՝ նշանակում է լոկ շոշափել լեզվի սահմանները: Այսպես է հասկանալի դառնում նաև Հայդեգերի «**լեզուն գոյության տունն է**» հայտնի արտահայտությունը:

Եվ ուրեմն, ցանկացած խնդրի լուծմանը մոտեցած կլինենք, եթե վերլուծենք այն լեզվական միավորները, որոնցով արտահայտված է խնդիրը: Ահա սա է լեզվաբանական շրջադարձի էությունը, որը տեղի ունեցավ նաև պատմության տեսության և փիլիսոփայության մեջ: Դա եղավ անալիտիկ պատմության փիլիսոփայության շրջանակներում, որի ներ-

6 Wittgenstein L., Tractatus Logico-Philosophicus. New York: The Humanities Press, էջ 36:

7 Նույն տեղում, էջ 114:

կայացուցիչները ստրուկտուրալիստների հետ մեկտեղ լեզվաբանական փիլիսոփայության սկզբունքները կիրառեցին պատմական տեքստերի առնչությամբ: Չէ որ պատմությունը ևս ներկայանում է իբրև լեզվական տեքստ, որն ունի իր տրամաբանությունը: Հետևաբար՝ շարադրված պատմությունը ոչ թե անցյալի նկարագրությունն է, ինչպես այն եղել է, այլ լեզվի և դրա տրամաբանության սահմաններում կառուցված տեքստն է: Այլ կերպ՝ ամեն անգամ՝ պատմությանն անդրադառնալիս, մենք գործ ենք ունենում որոշակի **պատմված** բանի հետ, որը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում **որևէ մեկի** պատմածն է ինչ-որ ժամանակաշրջանում, ինչը նշանակում է, որ «պատմական ճշմարտություն» կոչվածը ժամանակից ածանցյալ և խիստ պայմանական երևույթ է: Խոսելով պատմողական նախադասությունների մասին՝ Ա. Դանթոն հետևյալ օրինակն է բերում. «**Հիմունքների** հեղինակը ծնվել է 1642 թ. Վուլսթորփում»⁸: Սա կարելի է փոխարինել նույն նշանակությունն ունեցող մեկ այլ նախադասությամբ. «Իսահակ Նյուտոնը ծնվել է 1642 թ. Վուլսթորփում»: Բայց սրանց միջև էական տարբերություն կա. առաջինը ճշմարիտ կարող է լինել միայն 1687 թ. հետո, այսինքն՝ Նյուտոնի հայտնի աշխատության հրատարակումից հետո: Եթե անգամ ներմուծենք **կատարյալ ժամանակագրության** գաղափարը, որտեղ կամրագրվեն բոլոր իրադարձությունները, դրանով պատմաբանի խնդիրը չի վերանա: Քանի որ նախ, անցյալի իրադարձությունները գոյավորվում են ներկայի հետ հարաբերության մեջ և երկրորդ, կատարյալ ժամանակագրության մեջ չկան պատճառներ և հետևանքներ: Եվ քանի որ պատմությունն ունի հեղինակ, ստացվում է, որ յուրաքանչյուր տեքստ գրված է որոշակի դիտանկյունից ու տրամաբանությամբ: Ուստի պատմության ճանաչման համար պակաս կարևոր չէ հայտնաբերել այն լեզվական և տրամաբանական հնարները, որոնք առկա են տեքստի հիմքում: Հետզհետե ձևավորվում է պատմագրության պատմությունը վերակառուցելու անհրաժեշտություն:

Պատմության պարագայում լեզվական տարրական միավորների վերլուծությունը շոշափելի արդյունքների չհանգեցրեց, որովհետև առանձին նախադասություններում լիովին չի դրսևորվում տեքստի ոճը և հեղինակի՝ իր ժամանակի նախապաշարմունքներով դետերմինավորված լինելը: Այդ պատճառով ամբողջ պատումը կամ նարատիվը սկսեց դիտարկվել որպես պատմական տեքստի ամենափոքր միավոր: Սա կարելի է անվանել **նարատիվիստական շրջադարձ**:

3. Մետապատմությունը՝ նարատիվների ուսումնասիրման ոլորտ

1973 թ. լույս է տեսնում **Հայդեն Ուայթի** «Մետապատմություն. պատմական երևակայությունը 19-րդ դարի Եվրոպայում» աշխատությունը, որն իրենով նոր փուլ է մարմնավորում պատմության տեսության և փիլիսոփայության մեջ: Վերնագրից արդեն կարելի է գլխի ընկնել, որ այստեղ պատմաճանաչման հիմնական միջոց է հայտարարվում երևակայությունը:

8 Данто А., Аналитическая философия истории. М., «Идея-Пресс», 2002, с. 153:

Ուայթը սիրում է տարբեր առիթներով կրկնել, որ անցյալը երևակայության տարածքն է, որ այն այլ տեղ հայտնաբերել հնարավոր չէ⁹: Ուստի նարատիվները տրված են ոչ թե անցյալը նկարագրելու, այլ անցյալի մասին խոսելը հնարավոր դարձնելու համար կամ, ինչպես Անկերսմիթն է գրում՝ «նարատիվի գործառույթը աշխարհում մեր կողմնորոշվելը հեշտացնելն է»¹⁰: Նարատիվները **ստեղծում են** որոշակի փաստեր, այսինքն՝ հնարավորություն են տալիս պատմական եղելությունները կամրջել ներկայի հետ: Իսկ այդ նարատիվների հիմքում առկա լեզվական **տրոպների** ուսումնասիրման ոլորտը Ուայթն անվանում է **մետապատմություն**, այսինքն՝ պատմագրության պատմություն:

Իր հիմնական դիրքորոշումը նա ներկայացնում է այսպես. «Իմ տեսակետն այն է, որ գլխավոր տրոպաբանական եղանակը և դրան ուղեկցող լեզվական արձանագրությունը բովանդակում են ամենայն պատմական երկի անվերացնելի «մետապատմական» հիմքը»¹¹: Այսինքն՝ յուրաքանչյուր պատմական տեքստ ամփոփում է նաև իր մետապատմական հատույթը, և հետևաբար՝ ամեն պատմական շարադրանք նաև պատմության փիլիսոփայության մեթոդների որոշակի դրսևորում է: Պատահական չէ, որ իր աշխատության մեջ Ուայթը համապատասխանաբար չորսական գլուխներ է նվիրել, մի կողմից՝ պատմաբաններ Միշլեին, Ռանկեին, Տոկվիլին և Բուրքհարդտին, մյուս կողմից՝ պատմության փիլիսոփաներ Հեգելին, Մարքսին, Նիցշեին և Կրոչեին՝ դրանով իսկ կամուրջ նետելով նրանց միջև:

Ուայթն առանձնացնում է տասնիններորդ դարի պատմական երկի դե տերմինավորման հիմնական երեք մակարդակ՝ **սյուժեն կառուցելու եղանակը**, **կշռադատության եղանակը** և **գաղափարախոսական ենթատեքստի տեսակը**: Առաջին մակարդակում Ուայթը, Նորթոփի Ֆրայից փոխառելով, խոսում է չորս եղանակների մասին՝ **վեպ (Romance)**, **ողբերգություն**, **կատակերգություն** և **երգիծանք**: Վեպը ինքնանույնականացման դրաման է, որը խորհրդանշում է հերոսի՝ զգայական աշխարհի գանցումը. դա բարո՛ւ չարի նկատմամբ տարած հաղթանակի դրաման է: Երգիծանքի հիմնական մոտիվն այն է, որ մարդը վերջին հաշվով ավելի շուտ աշխարհի գերին է, քան տերը: Կատակերգության մեջ սյուժեն առավելապես ծավալվում է որպես մարդու՝ աշխարհի նկատմամբ տարած ժամանակավոր հաղթանակներ: Վերջապես, ողբերգության թեման մարդկանց մեջ հասունացող ճգնաժամն է¹²: Այսինքն՝ նույն իրադարձությունները կարելի է ներկայացնել տարբեր դիրքերից, մի դեպքում՝ իբրև բարու վերջնական հաղթանակ, մյուս դեպքում՝ ժամանակավոր հաղթանակ, երրորդ դեպքում՝ հույսի սպառում և այլն: Ընդ որում՝ դրանք համապատասխանաբար համաձայնության մեջ են կշռադատության կամ փաստարկման չորս ձևերի հետ՝ **Ֆորմալիզմ**, **մեխանիցիզմ**, **օրգանիցիզմ** և **համատեքստուալիզմ**: Սրանք իրադարձությունները մեկնաբանում են՝ կարևորություն տալով այս կամ այն հանգամանքին:

9 Տե՛ս Доманска Э., Философия истории после постмодернизма. М., «Канон+», 2010, էջ 32:

10 Ankersmit F., Narrative Logic. A Semantic Analysis of the Historian's Language. Martinus Nijhoff Publishers, 1983, էջ 33:

11 White H., Metahistory. The Historical Imagination in Nineteenth-Century Europe. The Johns Hopkins University Press, 1973, էջ xi:

12 Տե՛ս նույն տեղում, էջ 8-9:

Առաջինը, օրինակ, մեկնաբանությունը համարում է ավարտված, եթե որոշարկված են օբյեկտի ընդհանուր և մասնավոր հատկությունները, սեռատեսակային հարաբերությունները և այլն: Երկրորդը ավելի շուտ միտված է հայտնաբերելու վերանձնային օրենքներ, որոնցով հնարավոր կլինի բացատրել կոնկրետ պատմական անձանց վարքը: Օրգանիցիստները, ասենք, շեշտը դնում են «մեծ և փոքր տիեզերքների» համապատասխանության սկզբունքի վրա: Իսկ համատեքստուալիստները պնդում են, որ իրադարձությունները կարող են բացատրվել՝ բացառապես հաշվի առնելով այն համատեքստը, որտեղ տեղի են ունեցել¹³: Կշռադատման այս եղանակները և այուժեն կառուցելու եղանակները իրականանում են որևէ գաղափարախոսական հիմքից՝ **անարխիզմ, պահպանողականություն, ռադիկալիզմ և լիբերալիզմ**:

Եվ վերջապես, լեզվական առումով այդ ամենը ձևակերպված է չորս տրոպներից որևէ մեկի սկզբունքով՝ **փոխաբերություն, փոխանունություն, սինեկդոխա և հեգնանք**:

Մեկնարկելով Նիցշեից եկող այն մտքից, որ «չկա ոչ փոխաբերական լեզու», Ուայթն ընդգծում է, որ նարատիվներն առանց նշանակությունների պատումներ են, դրանց անմիջականորեն չի համապատասխանում և չի կարող համապատասխանել ոչինչ: Իսկ մետապատմության խնդիրը լեզվական տեքստի անպայմանական սահմանափակությունները նկատելն է և դրա հիման վրա ավելի լայն հորիզոններ բացող նարատիվների կառուցման համար անհրաժեշտ մեթոդների ու սկզբունքների առաջադրումը:

Անշուշտ, հարկ է նաև նկատի ունենալ, որ մետապատմությունները ևս գրվում են որոշակի դիրքերից: Օրինակ՝ Ուայթի իսկ բնորոշմամբ՝ իր աշխատությունը շարադրված է հեգնանքի տրոպի սկզբունքով: Ուստի մետապատմությունը իբրև վերջնական ու կատեգորիկ պատմություն դիտարկելը հակադրվում է ուայթյան մետապատմության ոգուն ու սկզբունքին: Ավելին, թերևս որոշ ժամանակ անց մետապատմության պատմությունը վերակառուցելու կամ, ավելի ճիշտ, կառուցելու կարիքը զգացվի:

Մետապատմությունը, այսպիսով, հնարավորություն է տալիս գիտակցելու շարադրված պատմությունների պայմանական բնույթը: Պայմանական՝ այն իմաստով, որ առկա պատումները կախված են հեղինակի ոճից, ճաշակից, փիլիսոփայական ու գաղափարախոսական դիրքորոշումից և այլն: Դա, մի կողմից, մասնավորապես հայոց պարագայում, կհիշեցնի, որ պատմությունը սոսկ պատերազմների նկարագրությունը չէ, և մյուս կողմից՝ որ պատմությունը ոչ միայն կարելի է, այլև անհրաժեշտ է սրբագրման ու հոգեվերանորոգման ենթարկել:

Դավիթ Ռ. Մոսինյան – գիտական հետազոտությունների բնագավառները՝ պատմության փիլիսոփայություն, մշակույթի փիլիսոփայություն, գիտության մեթոդաբանություն, կլինոյի նշանագիտություն:

13 Տե՛ս նույն տեղում, էջ 14-18:

Summary

THE IDEA OF METAHISTORY BY HAYDEN WHITE

In the context of linguistic turn

Davit R. Mosinyan

Key Words – history, historiography, world history, linguistic turn, narrative, analytical philosophy of history, White, meta-history, trop

The twentieth century philosophy is considerable, among other things, with the linguistic turn, which was intended to resolve the current confusion in philosophy. Linguistic turn declares that the only subject matter of philosophy is a language. That is the essence of the linguistic turn. Subsequently, it also took place in the theory and philosophy of history, because the history is presented as a linguistic text, which has its own logic. Therefore, the written history is not the description of the past, as it were, but is a text on a past built within language and its logic. Hayden White's "Metahistory: historical imagination of the 19th century in Europe" is a work which marked a new stage in the theory and philosophy history, as it presents the history of historiography for the first time.

Резюме

ИДЕЯ МЕТАИСТОРИИ ХЕЙДЕНА УАЙТА

В контексте лингвистического поворота

Давид Р. Мосинян

Ключевые слова – история, историография, всемирная история, лингвистический поворот, нарратив, аналитическая философия истории, Уайт, метаистория, троп

Философия XX века, помимо всего прочего, ознаменовалась лингвистическим поворотом, который был предназначен для решения текущей путаницы в философии. Лингвистический поворот заявляет, что единственным предметом философии является язык. Это и есть суть лингвистического поворота. Впоследствии этот поворот происходил также в теории и философии истории, потому что история тоже является лингвистическим текстом, который имеет свою собственную логику. Таким образом, письменная история не есть описание прошлого, как это было на самом деле, а текст о прошлом, построенный в рамках конкретного языка и его логики. Работа Хейдена Уайта "Метаистория: историческое воображение в Европе 19-ого века" знаменует собой новый этап в теории и философии истории, так как она впервые представляет историю историографии.